ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՄՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՔԱՌԱՐԱՆԻ»

Ա. Ե. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Անգնահատելիորեն մեծ է մեծ լեզվաբան (իսկ ավելի ճիշտ՝ հանրագիտարանային մտքի տեր գիտնական) Հրաչյա Աճառյանի դերը հայրենի լեզվաբանության, բանասիրության, գրականագիտության, բանագիտության զարգացման գործում: Նրա բազմահատոր գնիտական աշխատություններից յուրաքանչյուրը, անշուշտ, մի նվաճում է եւ մեծագույն ծառայության հերթական անուրանալի վկա:

Մեր պատմության մասին խոսելիս դժվար է հրաժարվել «արյունոտ» բառից: Անվերջանալի ռազմական բախումներին հետեւել են թալանն ու գերեվարությունը, զանահարումն ու կախաղանը, կրոնական զազրելի մոլեռանդության արգահատելի դրսեւորումները: Իսկ Հ. Աճառյանն անհիշատակելի չէր թողնի այն իրադարձությունները, որոնք հայ ժողովրդի համար բաշտոնոշ էին: Դրանցից էին 5-րդ դարի իրադարձությունները, որոնք պարսից ոտնձգություններին ընդդիմանալու հիանալի ապացույցներ են: Ավարայրի դաշտում սրբացած Վարդան Մամիկոնյանի մասին խոսելուց առաջ՝ Աճառյանը հիշում է, որ այս անձնանունը մեզ է անցել իրանական «Vardan» անունից: Հետո գրում է, որ Վարդան Մամիկոնյանը կոչվել է «Մեծն», «Քաջն», «Կարմիրն»: Նա ծնվել է 388-ին, Համազասպ Մամիկոնյանի որդին է եւ Ս. Սահակի թոռը: Հիշարժան է, որ Վ. Մամիկոնյանը 417 թ. Ս. Մեսրոպի հետ գնացել է Կոստանդնուպոլիս եւ ստացել «պտրատելատ» տիտղոսը: Գլխավորել է ուխտապահների կուսակցությունը եւ այլ նախարարների հետ կանչվել Հազկերտի Դուռը: Մեր նախարարները, ինչպես հայտնի է, ստիպված են եղել «առերես ուրանալ» հավատքը: Ազատ արձակվելուց հետո նրանք նախապատրաստեցին Ավարայրի ճակատամարտը (451 թ. մայիսի 26):

Հայ եկեղեցին սրբացրել է Վարդանին եւ նրա անվանն է նվիրել Ներսես Շնորհալու հայտնի «Նորահրաշ» շարականը, որից ներկայացվում է հետեւյալ քառասողը.

«Նորահրաշ» պսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու.
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զքշնամին,
Վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցին»:

Ըստ Նիկողայոս Մառի՝ կա վրացերեն գրված «Վկայաբանություն Վարդանի, նրա եղբայր Հմայեկի, Վահանի, Սահակի եւ 137 վկաների», որը հավանաբար, թարգմանված է Եղիշեից:

Քաջն Վարդանն իր օգնականների հետ ձերբակալեց Վնդոն մարզպանին եւ նրա որդի Ծերոյին: Վնդոն դավաճան Ծավասպի հետ Դվինում մի ատրուշան էր կառուցել եւ որդուն կարգել քրմապետ: Ճիշտ է՝ նրանց հետ դատաստանը բավական դաժան էր (հորը ողջակիզեցին, որդուն կախեցին Դվինում), բայց չմոռանանք, որ 450 թվականն էր՝ կենցաղ ու մահու կռվի ճակատագրական տարին: Ի թիվս այլ բաջագործությունների՝ Մերուխտի բանակի ջարդն է Վարդանի կողմից:

Այսպես՝ հայ հոգեւորականի՝ որպես քրիստոնեական հավատքի նվիրյալի լիակատար մարմնացումն է Ղեւոնդյանց խումբը:Ընդ որում, նման հերոսական նահատակության արժանանալն էլ բոլորովին պատահական չէր:

Ղեւոնդյանները Ս. Սահակի անմիջական հաջորդներն էին, այն Սահակի, որին կաթողիկոս տեսնելու ձգտումը հայ իշխանին (Վաչե Արծրունուն) 432-ին հասցրեց պարսից Վռամ թագավորի մոտ (վճռական պահերին աշխարհիկ տերերը բարձր են պահում հոգեւոր հովվին):

Պատահական չէր, որ այս խմբում էր Մաշտոցի աշակերտ Հովսեփը, որն էլ, ի թիվս այլոց, մարտիրոսվեց Ապար աշխարհում՝ կրելով անմարդկային տանջանքներ: Այդ խմբում էր Սահակի աշակերտ Քաջաջ Ռշտունին: Ատրոմիզդ մարզպանը նրան եւս նույն ճակատագրին արժանացրեց, եթե հավատափոխ չի լինում, ապա ոչնչացնել:

Հայտնի է, որ հայ իշխաններից ոմանք հետ են վերադարձել Պարսկաստանից: Օրինակ՝ Քաջ Վարդանի թոռները՝ Ներսեհ, Սահակ եւ Հրահատ Կամսարականները: Նրանց հայրը՝ Արշավիր Կամսարականը, բանտարկվել է 452-ին: Հետո մնացել է Վահան Մամիկոնյանի ապստամբությանը:

Տասներկու տարվա բանտարկությունից հետո հայրենիք վերադարձավ նաեւ Վրեն Տաշրացին: Վարդանանց պատերազմում դավաճան հռչակվեց Վասակ Սյունին: Նա դավաղրաբար սպանել էր տվել հոգեղորը՝ Վաղինակին, եւ ինքն էր դարձել Սյունյաց նախարար: 440-ին պարսից կողմից նշանակվել է Վրաստանի, իսկ 441-ին՝ Հայաստանի մարզպան: Ավարայրի ճակատամարտում դավաճան հռչակվելուն ավելացավ պարսից տերության դեմ մեղավոր գտնվելու փաստը՝ ճակատամարտից հետո: Արդյունքում՝ Վասակը մեռնում է բանտում... Իսկ մինչ այդ նա պատրաստ էր ոչ միայն զինաթափվելու եւ զինաթափելու յուրայիններին, այլեւ խանգարելու հայերին ուղղված ռազմական օգնությունը: Պարսկական սահմանի վրա հայոց հունական բանակի սպարապետը Վասակ Մամիկոնյանն էր (եւս մեկ «վասակ»): Հինգերորդ դարի պատմիչ Եղիշեն վկայում է, որ

վերջինիս դիմել է Վասակ Սյունին, որպեսզի նա հեռու պահի հույներին՝ հայերին օգնելու խնդրից: Վասակի կողմնակիցներից էր Սահակ Չայնող Սյունեցին. նա հավատափոխության օրինակ ծառայեց:

Մեկ դար առաջ Հայաստանում մեծ հռչակ էր վայելում Վամակ Մամիկոնյանը՝Տիրան Բ եւ Արշակ Բ թագավորների զորավարը: Նա պարսիկների դեմ ելել է քսանութ անգամ եւ քսանութ անգամն էլ վերադարձել է հաղթանակով: Բազմիցս պարտվողը պետք է որ վրեժ պահեր. Վասակը 368 թ. Պարսկաստանում մորթագերծ է արվում: Խոտով լցված նրա պաճուճապատանքը ամենախոր կերպով ընկճեց Արշակին:

Խառնակ ժամանակներում ծնվում են դավաճաններ, փառամոլներ: Սուրմակ երեց՝ Արծկեացին (որին Հ. Աճառյանը հիշում է «փառամոլ» մակդիրով) միանում է նախարարներին, որոնք համառորեն չարախոսում էին պարսից թագավորի առաջ երկու նպատակով. զահընկեց անել Արտաշես Գ-ին եւ Սահակ կաթողիկոսին: Սահակի փոխարեն կաթողիկոսական աթոռին նստեց Սուրմակը: Բայց, հայ նախարարների հալածանքին արժանանալով, մեկ տարի հետո դարձավ ընդամենը Բզնունյաց եպիսկոպոս: Փառքի մղումով՝ կաթողիկոսական պատվին արժանացավ մեկ անգամ եւս՝ Շմուելի մահից հետո (437 թ.): Մահացել է 443 թ.:

Հ. Աճառյանը նշում է հայ-պարսկական հարաբերությունների թշնամական բնույթը: Ճակատագրի կամքով դարավոր հարեւանները երկարատեւ պատերազմներ են մղել միմյանց դեմ: Հայերը հիմնականում պաշտպանվողի դերում էին: Վաչե նահապետ Մամիկոնյանը (IV դարի առաջին կես), որ Խոսրով Բ թագավորի հրամանով ջնջեց Մանավազյան եւ Որդունյան ցեղերը, հաղթականորեն վանում էր պարսից ռազմական արշավանքները: Դրանցից մեկում էլ սպանվեց նա:

Բացեիբաց թշնամությանը խառնվում էր զաղտնի նենգությունը: Պարսից հեթթական հարձակումից Պոլիս է փախչում Տիրան Բ-ն (339-350), ուր եւ օգնություն է ստանում: Շապուհն իր հավատարիմների միջոցով բռնում է նրան եւ կուրացնում: Ամոթալի է, սակայն, որ հայրասպանի անուն է վաստակում Արշակ Բ-ն. զժտվելով հոր հետ՝ նա խեղդել է տալիս կույր ծերունուն:

Վասիան Ամատունին (Տրդատի զորավարը) մեծ համբավ ձեռք բերեց Շապուհի եւ ընդհանրապես պարսից թշնամիների դեմ մղած պատերազմներում:

Խոսրով Բ-ի ժամանակ նշանակվել էր արեւելյան բանակի զորավար: Կովկասյան բարբարոսներին վանելու համար պարգեւ էր ստացել Օշականը: Ընդ որում, Փավստոս Բուզանդը նրան համարում է Խոսրով Բ-ի սպարապետ Վաչեի նիզակակիցը:

Պատմության էջերում հավերժացել է նաեւ մեկ այլ Վասիան Ամատունի՝ Հայոց աշխարհի սպարապետը, որն իր սեփական Օշական գյուղում է թաղել Մ. Մաշտոցի մարմինը: Նա մասնակցել է Արտաշատի ժողովին (449 թ.): Դենշապուհ պարսիկը պաշտոնանկ արեց նրան:

Ահա եւ շվոթության տեղիք տվող երրորդ Վասիան Ամատունին: Նա նույնպես մասնակցել է հիշյալ ժողովին, կանչվել է Հազկերտի մոտ եւ առերես ուրացել քրիստոնեությունը: Պարսիկների դեմ օգնություն խնդրելու համար մեկնել է Հունաստան:

Ավարայրի ճակատամարտի մասնակից է: Տասներկու տարի բանտարկվելուց հետո վերադարձել է Հայաստան (462 թ.):

Պարսկամետ կողմնորոշում ուներ Վասիան Մամիկոնյանը, որը միացել էր Մերուժան Արծրունու հետ եւ ապստամբել Արշակ Բ-ի դեմ: Նա բարեկամական կապեր հաստատեց պարսից թագավորի հետ եւ պարսկական զորքով հարձակվեց Հայաստանի վրա: Որդին՝ Սամվելը, կանգնեցրեց դավաճան հորը...

Իր հորեղբոր լուսե պսակը պիտի կրեր նաեւ Վարդանի եղբորորդին՝ Վասիան Մամիկոնյանը: Նա պատանդ տարվեց Պարսկաստան: Անխուսափելի կործանումից նրան փրկեց վրաց Աշուշա թագեշխը: Հայրենիք վերադառնալով՝ Վասիանն ապստամբության դրոշ բարձրացրեց Պարսկաստանի դեմ (485 թ.): Պարսից լուծը վանելու փորձերը շարունակաբար կրկնվել են: Այս անգամ պարսից Խոսրով թագավորի դեմ ապստամբել էր Վարդան Բ Մամիկոնյանը՝ սպանելով դրածո մարզպան Սուրենին: Նրան օգնության ձեռք մեկնեց հունաց Հուստինիանոս կայսրը, եւ պարսիկները հալածվեցին Հայաստանից (571 թ.):

Հունաց Մորիկ կայսեր (582-602) ջերմ վերաբերմունքին է արժանացել Մուշեղ Մամիկոնյանը, որը նշանակվել էր հունահայոց դուքս: 584 թ. նա պատերազմել է պարսից բանակի դեմ: Մորիկի հրամանով դերերը պետք է փոխվեին. այժմ Մուշեղը պետք է օգներ պարսից Խոսրով արքային՝ ընդդեմ ապստամբ Վահրամ Չորինի: Ծավալվում է հետաքրքիր պատմություն:

Այս Վահրամը միամիտ մեկը չէր: Նա խոստանում է Հայաստանը անկախ թագավորություն հռչակել, եթե Մուշեղն օգներ իրեն: Մուշեղը մերժում է: Պարտվում է Վահրամ Չորինը, սակայն հայ ռազմիկի հաջողությունը շարժում է պարսիկ նախարարների նախանձը. նրանք չարախոսում են Խոսրովի մոտ, իբր թե Մուշեղը բռնել է Վահրամին, բայց ազատ է արձակել՝ այն էլ ձի եւ զենք տալով: Խոսրովը հավատ է ընծայում նախարարների խոսքին եւ սուրհանդակ է ուղարկում Մուշեղի հետեւից: Երբ սուրհանդակը հրավեր է կարդում, Մուշեղը կարծում է, թե թագավորին նորից վտանգ է սպառնում: Նա իր հետ վերցնում է երկու հազար զինվոր եւ շտապում արքայի մոտ: Պարսից զորքը կանգնեցնում է նրան, բայց Մուշեղին հաջողվում է ճանապարհը շարունակել հիսուն զինվորով: Հայ մարտիկի հավատարմության (բայց ու՞մ) ցույցը մեծ հոգս պատճառեց նրան: Մինչ բարապանները պահանջում էին հանել զենքերը եւ այնպես ներկայանալ արքային, Մուշեղն սկսում է կասկածել: Զինված յոթ մարդկանցով նա մտնում է թագավորի մոտ: Խոսրովը շվոթվում է., կարկամում է... Իսկ Մուշեղը դուրս է գալիս եւ հեռանում...

Հնարամիտ քայլ է. գերի վերցնել արքայի թիկնապահներից մեկին եւ սպիպկել ասել ողջ ճշմարտությունը: Այդպես էլ վարվում է Մուշեղը: Ապերախտ արքան զորք է ուղարկում Մուշեղի հետեւից: Ի վերջո, հունական բանակի օգնությամբ Մուշեղը հաղթում է: Այնուհետեւ նա մնում է հունաց պալատում:

Հ. Աճառյանը հիշեցնում է, որ Մուշեղի մասին խոսում է Ֆիրդուսին, բայց՝ բավականին ստորացուցիչ կերպով:

Մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո Աճառյանը եկել է այն ազրակացության, որ մեր պատմիչներին ծանոթ չէ Մանվել Մամիկոնյանը, որն սպանվել է պարսից Մուրեն մարզպանի ձեռքով: Այս Մանվելի եղբայրն էր Վարդանը Մամիկոնյանը Միքայել Չամչյանին հայտնի է հույն պատմիչ Թեոփանես Բուզանդացուց:

Պարսից տերության դեմ ունեցած իր հաջողություններով աչքի էին ընկնում Մամիկոնյանները: Ահա եւ նրանցից մեկը՝ Գայլ Վահանը: Տարոնի իշխանը խաբեությամբ կոտորեց պարսից Միհրան զորավարի բանակը: Նրա որդին՝ Սմբատը, պարսից դեմ պատերազմել է Վահան Պալունու, Պալունյաց Վարազ իշխանի հետ:

Այդ պատերազմների ընթացքում նառուցվում է Վահանահովիտը: Գայլ Վահանի թոռը՝ Վահանը, հոր անմիջական գործակիցն էր: Այս քաջի եղբայրը՝ Տիրանը, դավաճանության զոհ է դարձել արաբական արշավանքի ժամանակ (639):

Հ. Աճառյանի կողմից անհիշատակելի չեն մնում բարիդրացիական հարաբերությունները: Այսպես, Պարսկաստան է հրավիրել եւ հետագայում ծառայության անցել Մամակ Մամիկոնյանը (փաստը հաստատում է Սեբեոսը):

Հետաքրքրաշարժ դիտարկումների շողարձակ հայելին ուղղվում է դեպի պարսից դիցաբանություն, եւ բանասեր գիտնականը հատուկ բացատրություններ է տալիս՝ կապված Զալ, Զաէն, Զոհրաբ, Եսթեր անունների հետ:

Հ. Աճառյանը խոսում է Դանիշմանների հարստության ծագման եւ վախճանի մասին: Հիրավի, հետաքրքիր է ու հատուկ նշումի արժանի այն փաստը, որ Դանիշմանը հայ իշխան է, «նախկին ուսուցիչ», որ Պարսկաստանում ընդունել է մահմեդականություն եւ Ալփասլանի կողմից նշանակվել է Սեբաստիայի ու շրջակայքի ամիրա: Իսկ «դանիշման» (նշանակում է «գիտնական») բառը դարձել է տիտղոս: Հիշյալ դեպքը տեղի է ունեցել 1071 թ., երբ ասպարեզ է իջել Դանիշմանների հարստությունը: Այն գոյատեւել է մինչեւ 1202 թ., ճիշտ այն ժամանակ, երբ Սեբաստիան ենթարկվեց Կեսարիային:

Պարսկական ազնվականական տոհմ է Միհրանը: Եղել է համանուն զորավար, որն արշավել է Գայլ Վահանի դեմ: Իսկ հայոց Արշակունի հարստության հիմնադիրն է Վաղարշակ Ա-ն՝ Արշակ Պարթեւի եղբայրը:

Իններորդ դարում հայ իշխանության հետ անմիջականորեն կապված եղել պարսիկ Սեւադա իշխանը: Նա ամուսնացել էր իշխանուհի Արուսյակ Բագրատունու հետ: Սեւադան հայերի օգնությամբ է գլուխ բարձրացրել արաբների դեմ:

Այստեղ առաջին անգամ տպագրվել է «Հարանց վանքը» (1641 թ.):

Համանուն մի քահանա (Խիզանցի, 17-րդ դար) ներկայացրել է շահ Աբասի գործերը եւ Սպահանի հայերի կրոնական ազատության հարցը: Խաչատուր Դավրիժեցին (16-րդ դար) պարսկերենից իտալերեն է թարգմանել մի վիպասանություն՝ «Ուղեւորութիւն երից ռոցց արքային Սերենդիպպոյ» վերնագրով:

Հ. Աճառյանը հիշատակում է պարսիկ բանաստեղծ Բաբա Թահիրին, վիպասան, փիլիսոփա Զաքարիա քահանա Շեհրիմանյանին (Նոր Զուղայից է): Վերջինիս կապակցությամբ հարկ է համարել ցույց տալ, որ մեր հայրենակիցը նշանավոր դեմք է իտալական գրականության մեջ: Նա ունի ստեղծագործությունների քառահատոր ժողովածու: Վիպասանը ծաղրում է գիտության կեղծ ծառաներին, բժիշկներին: «Քննադատները համարում են գերազանց, քան իտալական բոլոր փիլիսոփայական վեպերը եւ նախատիպ Սուիֆտի «Գուլլիվերի ճամփորդության»[1], վկայում է Աճառյանը Շեհրիմանյանի «ճամփորդութիւն Եվրիկոյ Վանտոնի ի թագավորութիւնս կապկաց եւ շնագլխաց»-ի մասին:

Զմռռանանք, որ Զաքարիա Շեհրիմանյանը անուն-ազգանունով մեկ այլ անհատ, որ Պարսկաստանի հայ վաճառականության ներկայացուցիչն էր, 1606 թ. ռուսական Ալեքսի կայսրը նվիրեց թագավորական զահ, «որի վրա հեռված էին 2100 ընտիր ակունք եւ 3 շարք մարգարիտ»[2]: Այժմ այդ զահը՝ «Ալմաստե զահ» անունով, գտնվում է Մոսկվայի զինապալատում եւ համարվում է ռուսական ցարերի զահերից ամենաթանկագինը: Ի դեպ, զահը մեծ նշանակություն է ունեցել իր ժամանակի հայ առեւտրականների կյանքում. նրանք (այդ նվիրատվությունից հետո) Ռուսաստանում առեւտուր էին անում՝ գառանց մաքս մուծելու:

Հ. Աճառյանի ուսումնասիրությունները արժեքավոր տվյալներ են հաղորդում այլ ժողովուրդների պատմության մասին եւս:

Ուշագրավ է մի իրողություն: Մեծ գիտնականը մեր եւ այլազգի պատմիչների փաստերը ճշգրտելուց հետո բառարանային հոդվածն այնպես է կազմում, որ ստացվում են գրական կերպարներ հայոց թագավորների, իշխանների, հոգեւոր գործիչների, ինչպես նաեւ այլազգի, տվյալ դեպքում պարսից զահակալների, զորավարների, պաշտոնյաների:

Հ. Աճառյանի արձանագրած վերոնշյալ պատմագիտական փաստերը որոշակի նպաստ են բերել հայ գրական անդաստանի մշակների՝ Ռաֆֆու, Դ. Դերմիրճյանի, Ստ. Զորյանի, Պ. Չեյթունցյանի, Խեչոյանի եւ այլոց համար՝ անհրաժեշտ կայակոչումները ճշգրտելու եւ պատմավիպասանության ժանրում իրենց ավանդը ներդնելու գործում:

[1] *Հր. Աճառյան, Հայոց Անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 201:*
[2] *Նույնը, էջ 199:*

ՄԱՐԴ - ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մ. Ա. ՄԱՐԳՍՅԱՆ

19-րդ դարի հայ մշակույթը, այդ թվում տեսական, փիլիսոփայական միտքը, զարգացավ իր ելակետում ունենալով սեփական էթնոպատմամշակութային համակարգի ներքին պահանջները՝ ազգն ու ազգայինը, հայի ու հայկականի առաջնայնությունը: Նման կողմնորոշվածությամբ ու հիմնական նպատակով է ընկալվում ու արժեքավորվում նաեւ եվրոպական լուսավորությունը, բուժական հարաբերությունների շնորհիվ ձեւավորված քաղաքակրթական նոր իրողությունները, զարգացման դրական ու բացասական միտումները:

Մարդու ու մարդկայինի հիմնախնդիրը ձեռք է բերում առաջնակարգ նշանակություն, քանզի այն հնարավորություն է տալիս առաջադրելու ու ուսումնասիրելու նաեւ հայ մարդու ու ազգի հետ առնչվող ամենատարբեր հարցեր: Այս առումով առանձնանում է նաեւ մարդ - քաղաքակրթություն փոխհարաբերության բնույթի պարզաբանման հարցը: Առանցքային է դառնում հատկապես այն, թե եվրոպական քաղաքակրթության հետ հնարավոր շփումները (տեսական, մշակութային, գաղափարական եւ այլն) ինչ հետեւանքներ կարող են ունենալ ազգային կյանքի ու հայ մարդու գոյության ու ինքնության, անհատական որակների պահպանման, դրանց զարգացման համար: Այս հիմնախնդիրը հայ տեսական մտքի մեջ իր անդրադարձն է ստանում 19-րդ դարի առաջին կեսից սկսած (Աբովյան, Զորայան, Նազարյան, Նալբանդյան, Սվազյան եւ ուրիշներ), բայց առավել սրությամբ ու ուղղակիորեն առաջադրվում է հատկապես դարի երկրորդ կեսին (Մ. Մամուրյան, Գ. Արծրունի, Ռ. Պերպերյան, Ե. Տեմիրճիպաշյան, Ստ. Պալասանյան եւ ուրիշներ):

Որքան մեզ հայտնի է, 19-րդ դարի հայ գրավոր մշակույթում առաջին անգամ շրջանառության մեջ դրվում է «քաղաքակրթություն» հասկացությունը: Եվրոպական ավանդույթի ոգով այն իր բովանդակությամբ հիմնականում նույնացվում է գոյություն ունեցող բուրժուական հասարակության հետ, թեեւ վերջինս գնահատվել ու իմաստավորվել է տարբեր չափանիշներով՝ որպես առաջադիմություն կամ հետադիմություն, մարդկայինի չափանիշներին համապատասխանող հասարակական կազմակերպման ու գոյության արտահայտություն: Այսպես, ըստ Մամուրյանի՝ «քաղաքակրթություն ըսվածն՝ որ բարոյական, գիտական, արվեստագիտական, ճարտարական զանազան ճյուղերու մեջ առնված առաջադեմ քայլերու գումարն է, որոշ չափ ու սահման չունի, քանի որ մարդկային զարգացման ասպարեզն անչափ ու անսահման է»[1]:

Գրեթե նույն կողմնորոշվածությամբ, Պերպերյանը նշում է՝ «Մի ժողովրդեան մեջ այնքան ավելի քաղաքակրթություն կա, որչափ գութ կա. սերն գերագոյն յաղթանակն է քաղաքակրթութեան. մարդիկ՝ եղբարք, ահա իդեալն փիլիսոփայութեան: յարն պարտի ընթանալ քաղաքակրթությունն,եթե չուզէ վերստին ի բարբարոսություն ընթանար դառնալ»[2]:

Այս երկու քաղվածքը հնարավորություն են տալիս պնդելու, որ հայ մտածողները քաղաքակրթության հետ կապում են որոշակի ընդգծված արժեքային ու մարդաբանական յուրահատկություն: Այսպիսով արտահայտվում ր նաեւ նրանց գաղափարական ընդհանրությունը Ռուսոյի, Կանտի, Տոլստոյի եւ այլ հումանիստների հետ: Նման մոտեցումը որոշ տարբերություններով հանդերձ բնորոշ է նաեւ այլ մտածողների: Հատկանշանականը այն է, որ հայ տեսական մտքի մեջ քաղաքակրթությունը ըմբռնվում է ոչ միանշանակ ձեւով: Այսպես, Կոստանդյանը, որին հատկապես բնորոշ է խնդրի իմաստավորման պոզիտիվիստական հայեցակարգը, մարդկային մտքի, հասարակական, տնտեսական կյանքի ողջ առաջադիմական ընթացքը կապում է հենց բուրժուական հասարակարգի բերած քաղաքակրթության հետ՝ պատմության դրական շրջանի հետ: «քաղաքակրթությունը ընդհանրապես երկրաչափական հառաջադիմությամբ կը քալե եւ անոր սկզբնական ընթացքը՝ հիմա մեզի համար աներեւակայելի կերպով համը բան մ'է... Մարդս այն ատեն սկսավ յուր արժեքը գիտնալ՝ երբ գիտական համոզումները եւ էնդյուստրին եկան՝ խղճի հանգստություն, նյութական բարօրություն ու ասով իսկ ընկերային բարոյականություն բերելու»:[3]

Ինչպես տեսնում ենք, Կոստանդյանի պնդումը ուղղակի է՝ բուրժուական քաղաքակրթությունը անառարկելի առաջադիմություն ու արժեք է նյութական, արդյունաբերական ու հոգեբանական առումներով: Նոր կամ դրական քաղաքակրթության այսպիսի ջատագովությունը Կոստանդյանը փորձում է հիմնավորել նաեւ մարդաբանական տեսակետից: Մարդագիտության ընդհանուր հաջողությունները նա դարձյալ փորձում է բացատրել այդ քաղաքակրթության մեջ ձեւավորված գիտական նոր մեթոդի ընձեռած հնարավորություններով՝ ներքինից, ենթակայականից դեպի արտաքինը, առարկայականը ուղղված միտվածությամբ: «Մարդս այն ատեն սկսավ լուսավորվիլ, երբ յուր ներքին ինքնակոչ լույսը թողուց ու զննելի, շոշափելի, զգալի առարկաներու դիմեց՝ յուր հարցումները ուղղելու: Խղճի, ուղեղի, մտքի, ջղերու ուսումը իսկ, որ մեր անձին, մեր եսին կը վերաբերի,

[1] *Մամուրյան Մ., Հառաջադիմության գործակներ, «Արեւելյան մամուլ», 1897, թիվ 18, էջ 602:*
[2] *Պերպերյան Ռ., Բանախոսութեունք, Կ. Պոլիս, 1880, էջ 33:*
[3] *Կոստանդյան Գ., Մեթոդի վրա, Երեւան, 1961, էջ 160-161, տես նաեւ էջ 178-182:*